

ուր էր: Նոր-Բայազէտի գաւառապետ պ. Գարա-
նելիյի նախաձեռնութեամբ, այդ օրը, ի պատիւ
պ. նախագահական տեղի ունեցաւ ճաշկերոյթ,
որը տեղեկ երկու ժամ: Տեղական հաշտարար դա-
տարանի արքունական չէքը, ուր ընդունուեց պ.
Շալիօվ, պատշաճաւոր կերպով դարձաւ իր
խնայեալ առաջ էլ էի հաղորդել «Մշակ» մի-
ջողով, ժողովրդի կողմից գնահատելով Շալիօվին
ընծայ պիտի տրվէր: Այդ մասին պ. Գարանելի
հրապարակապէս յայտնեց ըստ ներկայ գտնուող
ներքին, որ Նոր-Բայազէտի գաւառի և Գարաշիւազ
գաւառամասի գիւղական ազգաբնակչութեան կող-
մից արվելի ընծան, որը մի արժանաւոր մատու-
ցարան է և որը արդէն պատուիրված է Մօսկ-
վայում, — դեռ եւս ստացված չէ և որ այդ ընծան,
տեղացիք պ. գաւառապետը, որը կրելու է
«Նոր-Բայազէտի գաւառի և Գարաշիւազ գաւա-
ռամասի տեղական ազգաբնակչութեան կողմից»
արձանագիրը, — ստացվելուն պէս կուղարկվի
նորին գերազանցութեանը:

Պ. Շալիօվին երեսնից ուղեկցում էին՝ երեա-
նի քաղաքագլուխ պ. Գեղամով, նախագահական
պատգամի կառավարիչ պ. Բոնչուկով, գաւառա-
պետ պ. Միլիշ և այլ աստիճանաւորներ, ի միջի
այլոց և թուրք փանտա-խանը:

Ներքին-Ախտայում գիւղերուց յետոյ, միւս օրը,
15 փետրվարի, առաւօտեան ժամը 7-ին թէ պ.
Շալիօվ և թէ նրա ուղեկիցները մեկնեցան այս-
տեղից:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 21 փետրվարի

Այս օրերս «Մշակ» մէջ կարդացի, որ մի
պարոն, Աղտաֆայից, ցանկանալով նպատակ
ժողովրդական գրքերի տարածման, յանձն է առ-
նում, առանց վարձատրութեան և անհա-
ռել ժողովրդական գրքեր և խնայում է որ ու-
ղարկեն իրան այդ տեսակ գրքեր:

Իբրեւ ժողովրդական գրքերի հարցով հետաքը-
քովդ, չեմ կարող այդ առիթով մի քանի խօսք
չասել:

Ժողովրդական գրքերի պահանջը մեղանում
ներկայումս—չառ մեծ է: Ժողովուրդը կարգաւ է
ուզում,—բայց կարգաւ է ժամ և մատչելի գրք-
քեր չառ քիչ կան: Եւ այդ պատճառով, որքան
կարելի է չառ, ժողովրդական գրքեր հրատարա-
կելու խնդիր պէտք է համարել այժմ ընթացիկ
կարեւոր խնդիրներից մէկը:

Բայց այդ գրքերը հրատարակելու համար մի-
ջողովներ են հարկաւոր: Յատկապէս ժողովրդական
գրքեր հրատարակելու նպատակով կազմված ըն-
կերութիւններ չունենք: Եւ ի՞նչ ունենայինք էլ,
անկախա՞մ նրանք ոչինչ չէին անի: Իսկ մասնա-
ւոր միջոցներով անկարելի է մի այդպիսի դործ
սկսել և աղով կերպով առաջ տանել, քանի որ
գործը շատ մեծ ծառայաւ է:

Բացի դործը մեծ ծառայաւ լինելուց, գրավա-
ճառութեան պայմանները մեղանում անքան վատ
են, որ ժողովրդական էթանագին գրքերը ոչ թէ
միայն չեն հանում իրանց ծախսը, այլ ամբողջա-
պէս վնաս են անում:

Գաւառներում եղած մի երկու գրավաճառները
ժողովրդական գրքեր տարածելու կողմից անպէտք
են, որովհետեւ այսպիսի ընկած գրքերը թողի տակ
են մնում: Միտում է, որ գրքեր տարածողները
յանձն առնեն մասնաւոր մարդիկ, սիրողն և,
որոնք ուզում են նպատակ ժողովրդի ընթերցա-
նութեան:

Եթէ գաւառական քաղաքներում և մեծ մեծ
գիւղերում երեսն քան այդ տեսակ սիրողն և
մեր երիտասարդները մէջ, և մի փոքր աշխատանք
և զիւրացաւոր պատճառն իրանց, եւ հաւատա-
ցած եւ, մեծ դործ արած կը լինէին:

Բայց դրա համար հարկաւոր է, որ այդպիսի
անձինք, ոչ թէ ամեն մի գրքից պահանջեն մի
քանի օրինակ, որ ծախեն և յետոյ փոքր հաս-
նեն, այլ ուղղակի իրանք գնեն գրքերը, և իրանց
կողմից վաճառեն:

Պատճառը հասկանալի է: Եթէ ամեն մի գրք-
քից հարկաւոր տեղեր ուղարկվին՝ խրախուսելով
տեղ մի քանի տասնեակ օրինակ, ինչպէս փոքր
ցոյց է տալիս, ամբողջ ամիսներ և տարի
կանցնեն, բայց ոչ մի չօչափելի գումար յետ չի
գալ: Մի տեղից ուշանում է անհոգութեան պատ-
ճառով, մի ուրիշ տեղ պատ չը կայ, երբորդ
տեղը մի այլ պատահական հանգամանք,— և այդ-
պիսով գրքերը սպառվում են, բայց մէջտեղ մի
կօպէկ չը կայ:

Մինչդեռ ի՞նչ ամեն մի ցանկացող գիտե՞ք մի
երկու րօքի վճարելով առնել մի 40—50 գիրք,
և ինքն իր կողմից այդ գրքերը վաճառել իր քա-
ղաքում, կամ գիւղում, գրանով համ գրքերը
կը տարածվէին, համ էլ տարածվելու հետ միա-
սին կը գոյանար կանխիկ մի գումար, որը
կարող կը լինի նպատակ գրքերի հրատարակու-
թեան անարգել շարունակելուն: Այդ քանը դը-
ժուար չէ անել, որովհետեւ գրքեր առնող ոչ մի
կօպէկ չէ կորցնում: Աւելի կասեմ. դեռ նրան մի
քան էլ կը մնայ, որովհետեւ Թիֆլիսում գրքերը
նա կարող է վերցնել մի յայտնի գիւղում և իր
կողմից կարող է ծախել իսկական գնով:

Ահա այդպէս պէտք է վարվեն այն մարդիկ,
որոնք կամենում են առանց վարձատրութեան
թեւան նպատակ ժողովրդական գրքերի հրա-
տարակման և տարածման գործին:

Հակառակ դէպքում դժուար թէ կարելի լինի
ժողովրդական գրքերի հրատարակութեան գործը,
առանց մեծ գումարներ ծախսելու՝ հաստատ հիմ-
քերի վրա դնել:

Իսկ օրեցօր պէտք է վերցնել այդ մեծ գու-
մարները, մասնաւոր միջոցները բաւական չեն,
նպատակ ընկերութիւններ չը կան, իսկ բարե-
գործ հայն էլ դեռ իր փողը նուիրում է եկեղե-
ցու համար տեղեզոծ խաչեր քնելու, և սպէս մո-
ղովրդի գիրք մատակարարելու գործին նպատակը
իր «հոգու փրկութեան» համար ձեռնուր բան չէ
համարում:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Գանձակ, 20 փետրվարի

Ձեր պատուական «Մշակ» լրագրի անցիկ
տարւոյ № 134-ի մէջ հրատարակված տեսանք
մի լուր, որպէս թէ՛ Բանանց գիւղի ուսումնարանը
չառ անմիջապէս դրութեան մէջ է, նրա
չինութիւնը անպէտք է և ցուրտ, աշակերտները
տկուր են և բոքիկ և ուսուցչի ռոճիկը դեռ ան-
ցեալ տարվանից մասամբ չէ ստացված և այլն:

Որովհետեւ ես այդ ուսումնարանի հոգաբարձու
լինելու պատիւն ունեմ և նրա չինութիւնը իմ
ինքնիշխանութիւնով է կառուցվել համադրաբաների
նուիրաբերութեամբ, դուք այդպիսով գրգռած
լինեմ անպայտ թղթակցի նախանձը և նա կա-
մենում է իր զբաղւածութիւններով չօչափել ոչ
թէ միայն իմ, այլ և Բանանց գիւղի հասարակու-
թեան և նրա զարգացի պատիւը: Ուստի ճշմարտու-
թիւնը վերականգնեցնելու համար թող տուէք ձեր
լրագրի միջոցով պաշտպանել և հերքել թղթակցի
անհիմն լուրերը: Մեր գիւղի ուսումնարանի
դրութիւնը անմիջապէս լինել չէ կարող, քանի որ
այդ հասարակութիւնը միշտ նախաձեռնողի
է դէպի ուսում և կրթութիւն, որի ապացոյցն
այն է, որ այդ գիւղից դուրս են եկել մի քանի հա-
մալարանականներ, գիւղն ունի մի քանի գիմնա-
դրաններ, և աւարտածներ իրանց աշխատանքու-
թեանը ունեն ապահով վիճակ ու մի քանիսն էլ
վաշկում են իրանց հայրտանութեամբ: Դատելով նրան-
ցից հուսա արհեստաւորներ են կովկասում և
Անդրկասպեան երկրում: Սրանից կարկացնել
հնչու է և համոզվել, որ նրանց փոքրիկ երկխա-
ները, ուսումնարանի սանիկները տկուր և բոքիկ
չեն կարող լինել: Գալով ուսումնարանի շէնքին,
այդքանս վատահ կարող եմ ասել, որ թէ Գան-
ձակ քաղաքում և թէ նրա վիճակում չը կայ մի
գիւղ, որ Բանանց գիւղի ուսումնարանի շէնքի
նման մի հոյակապ դպրոցի շէնք ունենայ, սրբա-
տաշ քարով մի շինութիւն մեծ և փառաւոր պա-
տահաններով: Անցեալ ամառ Զորն բերեց այդ
գիւղը առաջնորդական փոխանորդ Գրիգորիս
կալիսկոպոս Աղտանեան և հիւանդով այդ դպրո-
ցի շէնքի վրա, այդ մասին իր հայրական գոհու-
նակութիւնը և օրհնութիւնը տուեց գիւղացիներ-
ին: Իսկ ուսումնարանի ցրտութեան համար
նոյնպէս անխիղճ զբաղւածութիւն է: Ո՛վ չէ իմա-
նում, որ այսպիսի գիւղերը հարուստ են առհա-
տարակ վաճառախայտով և միթէ ծնողները կը
համբերեն, որ իրանց որդիք գնան դպրոց և այն-
տեղ ցրտում սառնեն: Առհասարակ կարգադրված
է վաճառախայտի համար, որ ամեն աշակերտ
տանում է իր տեղի փայտ ուսումնարանի համար
և այնքան առատութեամբ դիւրում է փայտ, որ
ուսուցչի առատապէս օգտվում է ուսում-
նարանի աւելցուկ փայտից, իսկ պ. ուսուցչի
ռոճիկի համար թող բարեհաճ թղթակցից դնել
հոգաբարձութեան հաշվառմանը և կը տեսնէ, որ
անցեալ տարւոյ ռոճիկը մինչև սեպտեմբեր

ամիսը ուսուցչի ստացել է լիովին իր ստորա-
գրութեամբ դեռ յուլիս ամսում:

Ուրիմ թող տեսնեն «Մշակ» ընթերցողները,
որ ամեն մի բարեգործական հիմնարկութիւն ու-
նի իր թշնամիները, թող հաւատ չընծայեն այդ
տեսակ թղթակցիներ տարածած լուրերին, որոնք
իրանց յայտնի նպատակի համար խաւարին լոյս
են անուանում և լոյսին խաւար:

Հոգաբարձու Բանանց գիւղի միադասեան ու-
սումնարանի՝ Գեորգ Գրիգորիսեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ լրագրիներում կարդում ենք,
որ յունիստի 23-ին Սիբիրից հասաւ մայրաքա-
ղաքը մի քարավան, որը բերեց 360 պուգ ոսկի:

ՄՕՍԿԱՅԻ թերթերը հաղորդում են, որ Լեւ
Տօլստոյի «Լուսաւորութեան պատկերներ» (Полное
представление) պիւսան այս փետրվար ամսին պիտի
ներկայացվի Մօսկվայի «Գերմանական ժողովա-
րանի» դահլիճում:

Այս օրերս լոյս տեսն և ծախվում են Պետեր-
բուրգում, Պալլենկովի հրատարակութեամբ, նա-
նաւոր ուսու պուգլիկստ Ն. Վ. Շելգունովի հե-
ղինակութիւնները, ամփոփված երկու մեծագիր
հատորներ մէջ, Ն. Միխայիլովի առաջաբա-
նով: Գրքի սկզբում գրված է հեղինակի պատկե-
րը: Երկու հատորի գինը 3 րուբլի է, իսկ փա-
ռակաւ՝ 4 րուբլի:

«Русск. Бѣд.» լրագիրը լսել է որ 1880 թվի
մայիսի 20-ի օրէնքը, որով արգելվում է հրէանե-
րին մշտական բնակութիւն հաստատել և անշարժ
կալուածներ ձեռք բերել Գոնի զօքի երկրնե-
րում, պիտի տարածվի և Տերեբեան ու Կուբա-
նեան շրջանների վրա:

Իժնկապետ Գասպարեանց, զիմով «Тифл.
Листок» լրագրի խմբագրութեանը, դարձեալ
յայտնում է, որ այն հիւանդ երիտասարդը, պ.
Արթիւրով, որին սրտեցին Կօնի լիմֆան Թիֆ-
լիսի Միքայիլեան հիւանդանոցում, մինչև հիմա
ոչ թէ միայն չէ լաւանում, այլ նրա թոքերում
հեղձեալ սատկանում է: Իժնկապետ յայտնում
է որ պատրաստ է բժշկներին ցոյց տալ հիւան-
դին և նրանց առջև բացատրել հիւանդութեան
ընթացքի հետզհետէ վատանալը, լիմֆայի սրտու-
մից յետոյ: Եթէ պ. Գասպարեանց վատահանում
է այդ քայն անելու, այդ նա անում է աչքի
առջև ունենալով բաղձալիս հիւանդներին, որոնք
իրան դիմում են հարցնելով՝ արդե՞ք ենթարկեն
իրանց անձը Կօնի լիմֆայի սրտիմանը, թէ ոչ:

Տեղական լրագրիները լսել են որ կովկասեան
կառավարչապետ, գնեւրալ Շերեմետև, Պետեր-
բուրգից դուրս կը գա փետրվարի 24-ին և ճա-
նապարհ կընենի դէպի Թիֆլիս:

«Кавказ» լրագիրը հաղորդում է, որ երեւելի
շուքացի, տիկին Ալիս Զոն, մեծ պատիւ
գալու է Թիֆլիս, մեր քաղաքում կօնցիլաներ
տալու համար: Ամերիկոնի տիկինը փոխանակ
կրկնել, պիտի օրհնակցութեամբ շուքաց-
նում է ամեն տեսակ արիւնի: Ասում են որ
նրա շուքացին այն ատիճան կատարելագործ-
ված է, որ նման է ֆլյուի հնչիւններին: Նորե-
րումս ուսու պատկերադարձ «Стекоза» շաբա-
թաթերթը տպել է իր առաջին երեսի վրա Ալիս
Զոն տիկնոջ մեծագիր պատկերը: Տաղանդաւոր
արտիստուհին մի և նոյն փամփակ և շատ գեղե-
ցիկ կին է:

Ուրբաթ, 22-ին փետրվարի կայացաւ Թիֆլիսի
քանիկ թատրոնում ուսու դերասանուհի տիկին
Մայիլովայի բեմադրութիւնը: Խաղում էին Ֆրանսերէ-
նից փոխադրված «Գանգանք և պատիժ» պիէսան:
Թատրոնը գրեթէ լի էր և տիկին Մայիլովայ
ստացաւ հասարակութիւնից մի ծաղիկայ փունջ,
մի ալբոմ և ուրիշ ընծաներ: Թէև խաղացած
պիէսան բաւական թող գրուածք է և արտի-
ստուհին չէր կարող այդ պիէսայում ցոյց տալ իր
ամբողջ տաղանդը, բայց հասարակութիւնը դար-
ձեալ մեծ ոգևորութեամբ ընդունեց և անվերջա-
նալի ծափահարութիւններով վարձատրեց տիկին
Մայիլովայի խաղը:

«Տարազ» շաբաթաթերթը լսել է որ Թիֆլիսի

նախկին քաղաքագլուխ Մատիւսով ընդունում է
Բագրու Նախկին արդւնաբերութեան ընկերու-
թեան ներկայացուցչի պաշտօնը Պետերբուրգում:
Այդ լուրին շաբաթաթերթին աւելացնում է. «Ու-
րիշ աղբիւրներից լսում ենք, որ պ. Մատիւսով
նշանակվում է պ. Թիֆլիսի և ընկ. բուրգ գործի-
րի գլխաւոր կառավարիչ»:

«Тифл. Листок» լսել է որ Թիֆլիսի քաղա-
քային Գումայի քարտուղար պ. Յակոբ Տեղա-
նեան հրաժարվում է իր պաշտօնից և ընդունում
է նախագահութիւն օտա առանձին յանձնարարու-
թիւնների աստիճանաւոր պաշտօնը:

Մարտի 2-ին կայանալու է Թիֆլիսի Ժողովա-
րանում դիմակաւոր պարահանդէս յօդուտ հայոց
հրատարակչական ընկերութեան: Սկիզբը 9 ժա-
մին երեկոյեան: Պարոնները վճարում են 1 ր.
50 կ., իսկ տիկինները 1 ր.: Տոմարները կա-
րելի է առնել Ժողովարանում:

Երեւելի օպերետային երգչուհի, Ֆրանսուէի տի-
կին Բիւրկի, գալիս է Թիֆլիս և ներկայացու-
նել պիտի տա Ֆորկատտի թատրոնում:

Միջ լնդրում են տպագրել հետեւալ արդարա-
ցի նկատողութիւնը: «Մի քանի իրանց դերասան
համարող անձինք, սովորութիւն են արել թա-
փառել մեր գաւառները և իրանց քրպանի օգ-
տին ներկայացումներ տալով, սովորութիւն են
չինել թող փչել միամիտ ժողովրդի աչքերին
ցոյց տալով, որ իբրեւ թէ ուղում են նպատակ
տեղական դպրոցներին և ուրիշ հասարակական
հիմնարկութիւններին: Բայց իսկապէս այդ բոլո-
րի հետեւանք այն է լինում, որ հաւաքված փո-
ղերը մտնում են այդ թափառական դերասաննե-
րի զրպանը, իսկ հասարակութեան միակ օգուտն
այն է լինում, որ դրանց պատճառով կոխ և
զաւլմազաւ է սկսվում ժողովրդի մէջ և տեղի
են ունենում երկպառակութիւններ: Որտեղ ուղ
են դնում այդ թափառական դերասանները, իս-
կայն անվերջանալի գանգատներ են սկսում երե-
ւալ դրանց անբերատութիւնների դէմ, որ
գործում են յանուն գեղարուեստի, յանուն զըզ-
րոցի, յանուն հասարակութեան: Կանի վրա ամեն
տեսակ խորամանկութիւններ սովորած այդ թա-
փառաշրջիկ դերասաններն էլ մի խորամանկ մի-
ջոց են գտել լրագրութեան հաւաճանքից իրանց
աղաւ պահելու համար. նրանք դիմում են այ
և այն անձին, և խնդրելով ու այլ միջոցներով
զովաւանական բաներ են գրել տալիս՝ իրանց
խայտառակ ներկայացումների և շահախնդրական
նպատակների մասին»:

Լսում ենք, որ Թիֆլիսում բացվում են կերա-
կեայ նոր դպրոցներ՝ հասակաւորների համար:
Յանկանում ենք կատարեալ աղոթութիւն այդ
համակերել գործին:

Թիֆլիսում ուսուցչին լեզուով տեղի ունեցող
ժողովրդական դաստիարակութիւնները առաջ են
գնում: Գործի զեկալարները, առանց յուսահատ-
վելու ու եռանդով մէկը միւսի ետեւից դասախո-
սութիւններ են անում: Արիստ միայն, որ այլ
դասախոսութիւններն բուն ժողովուրդը, ամբողջ
քիչ է գալիս:

Թիֆլիսի ձայնաւորների շրջաններում այն հա-
մոզմունք կայ, որ քաղաքագլուխ կընտրվի Պողոս
Խլմայով, որը այժմ քաղաքագլխի պաշտօնակա-
տար է:

ԷՄԻՍԻՍԻՅԱՅ մեզ գրում են. «Այստեղ պատում
է հետեւալ լուրը, որ հաղորդում ենք առանց կրա-
խաւորելու ճշգրտութեամբ. կաթողիկոսը մտադրի
եպիսկոպոս ձեռնադրել արկապ Նահապետեանի
որից յետոյ Նահապետեան կերթայ իբրեւ առաջ-
նորդ Աստրախանի թեմը, իսկ Աստրախանի թեմի
առաջնորդ Գեորգ եպիսկոպոս Սուրենեանի
մտադրութիւն կայ Թիֆլիս տեղափոխելը»:

Քաղաքիս ուսու մանկավարժներ և մանկա-
վարժուհիների շրջանում միտք է յղացել հիմնե-
լու «մանկավարժական-գիտական ընկերութիւն»:
Արդէն մշակվում է կանոնադրութիւն, որը պէտք
է առաջարկվի կառավարութեան հաստատու-
թեանը:

Գօգուտ Աղաթանի, ամսին 24-ին, պէտք է



№

ВЕСНА 1891 Г.

23.



САДОВОЕ ЗАВЕДЕНИЕ БРАТЬЕВЪ ОТТОНА И ФРИДРИХА ПЕТРОВИЧЕЙ ШИКЪ

въ ЕКАТЕРИНОДАРЪ Кубанск. Обл.

ПРЕЙСЪ-КУРАНТЪ СЪМЕНАМЪ ОГОРОДНЫМЪ И ЦВѢТОЧНЫМЪ.

Примѣчаніе: Поступающіе въ продажу сѣмена всѣ отборнаго достоинства, частью собраны здѣсь въ нашемъ заведеніи, частью же получены отъ лучшихъ производителей русскихъ и иностранныхъ.

Кромѣ того они провѣряются во всхожести лично мною.

Всѣ требованія какъ городскія, такъ и иногороднія исполняются по порядку ихъ поступления. Продажа производится только за наличныя деньги и Садовое Заведеніе покорнѣе проситъ гг. заказчиковъ добавлять къ деньгамъ, слѣдующимъ за выписываемыя сѣмена, известную сумму на укупорку и пересылку оныхъ по почтѣ, согласно почтовому тарифу. Заведеніе съ своей стороны обязывается заказанное упаковать съ аккуратностью и точностью и переслать по самому выгодному для покупателя способу.

Гг. заказчиковъ покорнѣе просятъ адресъ свой писать подробно и четко.

Заказы на сѣмена принимаются во всякое время; продажа же начинается съ Января мѣсяца 1891 года.

Корреспонденція на русскомъ и нѣмецкомъ языкахъ.

Садовое заведеніе находится въ г. Екатеринодарѣ, Куб. Обл., за Карасуномъ, въ Дубинкѣ по дорогѣ къ вокзалу ж. д.

Адресъ для писемъ: Садовое заведеніе Братьевъ ШИКЪ, въ г. Екатеринодарѣ Куб. Обл.

„ телеграммъ: ШИКЪ—Екатеринодаръ.

Екатеринодаръ Декабря 1890 года.

Бр. Шикъ.

ТАКСА

вѣсоваго сбора за пересылку посылокъ отъ г. Екатеринодара до столичныхъ, губернскихъ и областныхъ городовъ Имперіи и нѣкоторыхъ мѣстъ Кавказа отъ Екатеринодара.

Число верст.	Съ фунт. коп.	Число верст.	Съ фунт. коп.	Число верст.	Съ фунт. коп.	Число верст.	Съ фунт. коп.	Число верст.	Съ фунт. коп.
До Або	2611 30	До Выборга	2194 30	До Калиша	2303 30	До Новочеркасска	347 5	До Смоленска	1571 20
„ Акмолинска	4181 50	„ Вѣрнаго	3964 40	„ Калуги	1477 20	„ Новороссійска	— 5	„ Ставрополя	384 5
„ Александрополя	990 10	„ Вятки	2221 30	„ Кишинева	1061 20	„ Оренбурга	1986 20	„ Тамбова	1148 20
„ Анапы	— 5	„ Гори (Тифл. г.)	— 10	„ Кизляра	— 10	„ Орла	1208 20	„ Тапкента	3187 40
„ Архангельска	2695 30	„ Георгиевска	— 5	„ Кіева	1303 20	„ Пензы	1406 20	„ Твери	1624 20
„ Астрахани	1198 20	„ (Терск. обл.)	— 5	„ Ковно	1881 20	„ Перми	2379 30	„ Тифлиса	809 20
„ Ахалыха	— 10	„ Гродно	1917 20	„ Кубы	— 10	„ Пятигорска	— 10	„ Тулы	1354 20
„ Баку	1212 20	„ Грознаго (Тер-ской обл.)	— 10	„ Курска	1068 20	„ Петровска	— 10	„ Темрюка	— 5
„ Благовѣщенска	8229 90	„ Дербента	— 10	„ Кутанса	1016 20	„ (Даг. обл.)	— 10	„ Уральска	1951 20
„ Баталпашинска	— 5	„ Дешлагара	— 10	„ Ленкорана	— 20	„ Полтавы	939 10	„ Харькова	839 10
„ Бѣл. ключа	— 10	„ Екатеринослава	863 10	„ Люблина	1884 20	„ Поти	— 20	„ Херсона	699 10
„ Варшавы	2056 30	„ Елисаветполя	990 10	„ Минска	1601 20	„ Ростова на Д.	— 5	„ Чернигова	1276 20
„ Вильно	1782 20	„ Ейска	— 5	„ Майкопа	— 5	„ Рязани	1279 20	„ Шемахи	— 20
„ Витебска	1698 20	„ Житомира	1432 20	„ Москвы	1462 20	„ Самары	1589 20	„ Эривани	1073 20
„ Владикавказ	608 10	„ Казани	1802 20	„ Моздока	— 10	„ С.-Петербурга	2069 30	„ Эчмиадзина	— 20
„ Владиміра	1646 20	„ Кавказской	— 5	„ Нахичевани	— 20	„ Саратова	1162 20	„ Якутска	8728 90
„ Вологды	1918 20	„ станціи	— 5	„ (Эрив. губ.)	— 20	„ Симбирска	1596 20	„ Ярославля	1728 20
„ Воронежа	910 10			„ Ниж.Новгород	1707 20	„ Симферополя	458 5		

Самая меньшая взимаемая почтовымъ учрежденіемъ плата за посылки—20 коп.

ОГОРОДНЫЯ СЪМЕНА

продаются фунтами и лотами; по фунтовой цѣнѣ отпускаются не менѣ 1/4 фунта.

Предметы обозначенные крупными буквами составляютъ достойные вниманія сорта.

При требованіи достаточно писать № № каталога и количество.

№№	Фунт.	Лот	№№	Фунт.	Лот	№№	Фунт.	Лот
	Р. К. К.			Р. К. К.			Р. К. К.	
Кухонныя травы.			Кочанная капуста.			Скорпионера (Schwarzwurzel) русск.		
5 Бакалжаны (помидоры) большіе красные	2	10	155 Марнопольская ранняя			320		
6 „ красные большіе гладкіе	—	20	160 Ивановская ранняя	2	50 15	325 Рѣпа ранняя майская	3	15
7 „ Фикарацы скороспѣлк. большіе	4	20	165 Ранняя голл. сахарная	3	15	330 Рѣпа осенняя бѣлая	1	5
8 „ Трофи большіе гладкіе	4	20	170 „ Юрская	2	10	331 „ Петровская	1	5
9 „ Конкероръ (Conqueror) амер. бол.	—	20	175 Брауншвейгская большая 1-го разбора	3	15	335 „ Тельтовская	1	5
10 „ стодневные ранніе	—	20	180 Болгарская пудовая	2	50 15	340 Бураки (свекла) Эрф. черноокрасные		
15 „ грушеобразные	—	20	185 Греческая пудовая	3	15	345 „ русскіе круглые красные	50	5
20 „ яблокообразные	—	20	186 Коломенская большая	3	15	350 „ круглые греческіе	60	5
25 „ Король Гумбертъ, ранніе, очень плодovitый сортъ	—	30	195 Голландская черноокрасная ранняя	3	15	355 „ нонъ плюсъ ультра	1	5
30 „ Президентъ Гарфильдъ, замѣчательный сортъ необыкновенной величины	—	40	200 „ кровокрасная поздняя	3	15	360 „ круглые и длинныя смѣсь	40	5
35 „ Смѣсь всѣхъ сортовъ	1	5	Капуста разныхъ видовъ.			Салатъ.		
40 Бакалжаны длинныя фиолетовыя	4	20	205 Савойская ранняя любимая Грота	3	15	365 Рѣзной круглолистный желтый	2	10
45 Борого или огуречная трава	1	5	210 „ поздняя зеленая	3	15	370 „ кудрявый желтый	3	15
50 Кервель простой	—	75 5	215 Брунколь зимн. кудрявая зеленая	2	10	375 Кочанный имперіалъ	3	15
55 „ кудрявый	1	5	220 „ зимн. кудр. красная	2	10	380 Штейнкопфъ отличный	3	50 20
60 Маюранъ французскій	—	15	225 Шпресенколь Брюссельскій	2	10	385 „ Форель большой пестрый	3	
65 Перець стручков. длин. красный	3	15	230 Кольрабъ ран. Вѣнская бѣлая	3	15	390 „ желтый зимній	2	50 15
70 Петрушка листовая обыкновенная	—	50 5	235 „ англійская поздняя	2	10	Разные салаты.		
75 „ кудрявая	1	10	240 „ голландск. исполненск.	2	25	395 Салатъ полевой (Feldsalat)	1	5
80 „ папоротниколистная	1	50 15	245 Брюква желт. масляная	2	10	400 „ крестъ обыкновенный	1	5
85 Тминъ нѣмецкій	1	5	Коренья.			405 „ кудрявый	1	50 10
90 Укропъ душистый	—	50 5	250 Морковь (коротель) ранняя голл. красная	1	25 5	410 „ испанскій Настурція	2	20
95 Чабаръ	1	50 10	255 „ Воробьевская красная	1	5	Лукъ рѣпчатый.		
100 Цавель широколистный	1	50 10	260 „ Альтрингамская красн. длинная	1	5	415 Эрфуртск. свѣтлоокрасн.	3	15
105 „ длиннолистный	2	10	265 „ тушконечная красная безъ сердечины	1	50 10	420 „ темноокрасный	3	15
110 Шпинатъ Голдрі круглолистн.	—	50 5	270 „ Брауншвейгская большая	1	50 10	430 „ красн. и желт. смѣсь	2	10
115 „ голл. длиннолистн.	—	50 5	285 Пастернакъ длинный	50	5	435 Нѣм. нов. желт. Zittauer.	4	20
120 „ англійскій многолистн.	—	75 5	290 „ круглый	50	5	440 Лукъ сѣянецъ, мѣстный крупный прочный сортъ	10	
125 Бамя длиннострочная	3	15	295 Петрушка корневая ран. сахарная	50	5	Лукъ порей.		
Цвѣтная капуста.			300 „ корневая длинная	50	5	450 Эрфуртск. толст. зимн.	3	15
130 Эрфуртская самая ранняя карликовая порція 50 к., лотъ 3 руб.	—	—	305 Сельдерей Эрф. исполненск.	2	10	455 Исполненск. Carentan		20
135 Императорская Imperial ранняя лотъ 1 р.	—	—	310 „ Наумбургскій большой	2	50 15			
140 Итальянская исполненск.	—	—	315 „ нонъ плюсъ ультра	20				
145 Леопольдъ поздняя	—	—						
150 Штатгольдеръ поздняя	—	—						

լինել մի մեծ երեկոյն: Ահա թէ ինչ են գրում այդ մասին Պետերբուրգի լրագիրները: «Քաղաքային կոնսերվատորայի դահլիճում կայանալու է վերին աստիճանի հետաքրքրական զբոսայգի-թատերական երեկոյն, յոգուտ յայտնի հայ ողբերգու Ալեքսանի, արնայի յայտնի ոյժերի անասկանութեամբ, ինչպէս տիկնանք՝ Ֆերնե-Ջերմանո և Տերան, պարոններ՝ Կոստին, Առէր, վերժերլովի և ուրիշները: Այդ երեկոյնը կազմվում է տիկին Սալինայի նախաձեռնութեան հարցով և դրանում մասնակից են նոյնպէս և ուսուցիչ ֆրանսիական դրամատիկական խմբերի մի քանի արտիստները: Այսպէս ինչ մեծ տաղանդ մի յայտնի է դրամատիկական արհեստը գնահատողներին: Այդ արտիստը մեծ մասամբ Ռուսաստանում է խաղացել և ի միջի այլոց Պետերբուրգում, ուր շատ յարգողներ է գտել ոչ թէ միայն հասարակութեան, այլ և արտիստների մէջ, որոնք և շատաւն են ըստ կարողութեան օգնել իրանց ընկերակցին»:

Այսօր, ամսի 26-ին, Ռեֆիկի իգական գիւնարկայում լինելու է վարժութիւնների ընկերութեան ընդհանուր ժողովը: Այդտեղ առաւօտեան 11 ժամին է: Ժողովին ներկայ կարող են լինել կողմակի անձինք նա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱՅԻՆ ԳՍԱԳԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՅՈՒՂԻՆ

Վերջին ժամանակները եւրոպայից սկսեցին աստիճանաբար ուղարկել զարման Աֆրիկայի վրա: Սեմարիտների ահալին ցամաքը սկսել է փոքր առ փոքր զբաղել զէպի իր երկրները հազարաւոր եւրոպացի դաղթականներ: Ո՛վ գիտէ, ժամանակով Աֆրիկան էլ դառնալու է կուսածողիկ եւրոպական պետութիւնների մէջ...

Վաղուց է արդէն Անգլիան, բացի Աֆրիկայի հարաւային կապուտը առնելով, տիրում էր Աֆրիկայի մի քանի ծովափայ երկրները, Աֆրիկայի Ֆրանսիայի ձեռքումն էր: Բայց այժմ Աֆրիկայի գրեթէ բոլոր մասերը այս կամ այն եւրոպական պետութեան ձեռքումն են: Տրիպոլիսի և Տունիսի վրա անկախութիւն ունեն թէ Ֆրանսիան և թէ Իտալիան, Եգիպտոսում Անգլիան է հաստատուել, Արմենիան ձեռք է գցելու Իտալիան, Բելգիան կոնգո անվան ահալին երկրի մեծ մասի վրա է տեղապահուում, Կոնգոյի միւս մասը Ֆրանսիայի ձեռքումն է, Դամարականը ապառ երկրները Գերմանիայի ձեռքումն է, վերջապէս և Սալանիան ու Պորտուգալիան ունեն Աֆրիկայում իրանց կոլոնիաները:

Սակայն կանաճողուր կոլոնիալիզմի գործը Աֆրիկայում շատ դանդաղ է անհաստատ քայլերով է առաջ գնում: Երկրի բնական հարստութիւնները անսպասելի են երևում, բայց կլիման կործանելի լինելով՝ մարդիկ դժուարութեամբ են զինանում կլիմային և այդ պատճառով եւրոպական ազգերից ոչ մէկը սպասած աշտոյթեանը դեռ չհասել սեւամորթների երկրներում:

Դարձեալ պէտք է խոստովանել, որ Անգլիան մի կողմի, ամենից շատ աշտոյթեանը ունի իր Աֆրիկան կոլոնիաներում: Բելգիան: Բելգիական կառավարութիւնը, բելգիական դրամատիկները՝ ոչինչ նիւթական միջոցներ չեն խնայում իրանց ձեռքն ընկած ահալին Կոնգո՝ երկիրը կարողութեան չափ մշակելու և արդիւնաւորաբար: Նորբուրում այդ ճշմարտութիւնը խոստովանեց ֆրանսիական պատգամաւորների ժողովում պետական բարոյաբարի օգնական պ. Խալէն, մի և նոյն ժամանակ ցաւ արտայայտելով որ ֆրանսիական օտարակոյտեան առկա գտնվող Կոնգո երկրի կէտը գրեթէ ոչինչ առաջդրութիւն չէ անում, ոչ մի առևտրական, արդիւնաւորական քիչ թէ շատ նշանաւոր ձեռնարկութիւն չէ աշտոյթում ֆրանսիական Կոնգոյում: Պ. Խալէն իր ճառախոսութեան վերջում հրաւիրում է ֆրանսիական կապիտալները ձեռնադրել լինել Կոնգոյի անսպասելի բնական հարստութիւնների մշակութեան գործին:

Սակայն Ֆրանսիան մենակ չէ, որին չեն աշտոյթում Աֆրիկան դաղթականութիւնները: Այս բոլորին մեծ զգուշութիւն է տրուում և Գերմանիան Աֆրիկայի դաղթականութեան գործին անաշտոյթեան պատճառով: Ներհայեաց հասարակաց կարծիքը և Բիտանիկ կուսակցի գերմանական մամուլը օգուտ են քաղում այդ անկերն անաշտոյթ:

Գերմաններից՝ այժմեան կառավարութեան և յատկապէս կապիտալի պետական կանցլերի անընդունակութեան դէմ յարձակելու համար: Բայց կապիտալի դէմ ուղղված այդ բոլոր մեղադրանքներն ու յարձակումներն անսկզիւ են և անարդար: Հաւատարմութեամբ շարունակելով Աֆրիկայի գերմանական դաղթականութիւնների վերաբերմամբ Բիտանիկի դրոշմաւորութեան եղանակը, այժմեան գերմանական կառավարութիւնը աւելի և աւելի է համոզվում, որ ինչքան մեծ դոնաբուր-թիւններ էլ անի նա, թէ մարդկանցով և թէ կապիտալներով, այնու ամենայնիւ այդ մեծ գոնաբիւրթիւնների փոխարէն ձեռք է բերելու շատ նշան արդիւնքներ:

Երբ իշխան Բիտանիկ այդքան աղմուկով յարուցեց գերմանական դաղթականութեան հարցը և գերմանական կապիտալիստներին զրոյց դէպի վտանգաւոր ձեռնարկութիւնները, երբ գերմանացի պրոֆեսորներ հաստ գրքեր էին գրում Աֆրիկայի մասին, երբ ամբողջ Գերմանիայում անսահման ոգևորութիւն էր տիրում Աֆրիկան դաղթականութեան հարցի առիթով, այն ժամանակ անգլիական մամուլը մարդաբանութեան էր, թէ գերմանական դաղթականութիւնները Աֆրիկայում աշտոյթելու չեն: Եւ ճշմարիտ, մասնաւոր արդիւնաւորական ինքնիշխանութիւնները Գերմանիայում ապացուցեց, որ անգլիական կանցլեր իր կողման բարձրութեան վրա: Արդիւնաւորական գործը, որը սկզբից արդէն կազմակերպվեց պ. Լեպլերից կապիտալիստի հոգովանորութեան տակ, այն հետեանքն ունեցաւ, որ նորբուրում Լեպլերից կառավարված անակապառ Այժմ ինկարի մարդիկ Գերմանիայում պարզ են տեսնում թէ Գերմանիայում աշտոյթելու մի գործը էր և թէ գերմանական տիրապետութիւնը Աֆրիկայում այդ երկրի մեծ ծովափայ երկրի շրջանում՝ շարունակ անաշտոյթեաններ է հանդիպում: Անուրանալ է, որ երկիրը վերին աստիճանի հարուստ և բերրի է, սակայն գերմանացի անընդունակ հանդիպացան այդ երկրից օգտուելու:

Եւ նորբուրում, երբ Աֆրիկայի գերմանական դաղթականութեան ընկերութեան կառավարիչը յայտնեց, թէ ընկերութեան գործերը յուսահատական դրութեան մէջ են գտնվում, մինիստր Մարշալ պատասխանեց նրան, թէ ընկերութիւնը չը պէտք է յուսալ Բելգիայից մի ուր և է դրամական օգնականութիւն նորից ստանալու...

Եւ կառավարութեան միւրումը ընկերութեան գործերին օգնութեան ձեռք մեկնելու՝ երկրի այն հետեանքը կունենայ, որ վաղ թէ ուշ մի ուր և է անգլիական հաստատ ձեռնարկութիւն յաջորդ կը հանդիսանայ գերմանական անաշտոյթականութեան նիւթեան, և վերջ ի վերջոյ դարձեալ Անգլիան կը հնձէ այն, ինչ որ ցանկ է Գերմանիան, դարձեալ Անգլիան պտուղներ կը քաղէ Գերմանիայի արած ծանր և սպաւորին զոհարկութիւնները:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Այն թշնամական ցոյցերը, որ Պարիզում տեսնել է վիկտորիա այրի կայսրուհու դէմ Ֆրանսիական արդարեւների դաշնակցութիւնը, մեծ վրդովմունք է պատճառել Գերմանիայում: Գերմանական հասարակաց կարծիքը յոյս է յայտնում որ ֆրանսիական մամուլը կը դատապարտէ այդ անարժան ցոյցերը:

—Ասում են, որ Պարիզի գերմանական դեսպան Կոմս Միւնտեթեր թողնում է իր պաշտօնը:

—Ասում են որ Բերլինի ֆրանսիական դեսպան Լըբլա յետ կը կանչվի Բերլինից:

—Լուր կայ որ Կոմս Վալդեբլէ կը նշանակվի գերմանական դեսպան Պարիզում:

—Մարիլի Սթրեբի խորհուրդ է տուել Վիլհելմին կայսրին չը գնալ Պարիզ, առարկելով որ այդ ճանապարհորդութիւնը կարող էր վտանգել նիւթարկը եւրոպական խաղաղութիւնը:

—Լուր կայ որ Գերմանիան առաջարկում է Գանիային յետ առջ Շէզվիլի նահանգի հիւսիսային մասը և դրա փոխարէն պահանջում է Բորն-ճոյմ կղզին: Սակայն դանիացիք համաձայն չեն այդ տեսակ առաջարկութիւնն ընդունելու: Բորն-ճոյմ հին դանիական կղզի է, իսկ Շէզվիլի նահանգը այսպէս թէ այնպէս Պրուսիան վերջ է վերջոյ պէտք է յետ տայ Գանիային, ինչպէս և պարտաւորվել է 1866 թվ. դաշնադրի դրութեանը:

—Սան-Ֆրանցիսկոյից հաղորդում են, որ իւմում մեծ հեղեղ է պատահել: Բազմաթիւ երեք քառորդակմանը ջրի տակ է:

—Ֆրանսիական «Temps» լրագիրը լսել է, որ Կ. Պոլսի անգլիական դեսպան սըր Ռիլիամ Ուայթ իր պաշտօնից պէտք է հրաժարական տայ և բոլորովին հեռանայ զիլլամատական ասպարէզից:

—Ֆրանսիական կառավարութիւնը, ինչպէս կարդում ենք լրագիրներում, խիստ կերպով բողբեց անգլիացիների այն ծրագրի դէմ, որով Անգլիան առաջարկում էր Եգիպտոսի դատական բարձր ատենի մէջ չընդունել ֆրանսիական ներկայացուցչին, այլ առաջարկում էր այդ ատենի մէջ նշանակել միայն երեք անգլիացիներ, որոնցից միւրը պիտի լինէր անգլիացի, միւսը՝ իտալացի, իսկ երրորդը մի տեղացի: Ֆրանսիան բողբեցով այդ մտադրութեան դէմ յայտնում է, որ մինչև չը լսվի իր ձայնը, նա պիտի մերժէ եգիպտական պարտքերի վերածման հաւանութիւն տալը:

—Վիեննայի «Wiener Tagblatt» լրագիրը նկատում է, որ Գերմանիան այժմ տուժում է այն, որ Պարիզի ցուցահանդէսի ժամանակ այդքան անողորմ կերպով ծաղրում էր ֆրանսիացիներին:

—Գերմանական «Kreuzzeitung» լրագիրը խօսելով Վիկտորիա այրի կայսրուհու Պարիզում եղած ժամանակ պատահած անհարմար դէպքերի մասին, գովում է Կոնստան մինիստրի վարմունքը, բայց միաժողովում է Կարնո նախագահին, ասելով թէ նա բաւականաչափ եռանդ չը ցոյց տուցէ:

—Վաղուց մոռացված գնեւրալ Բուլանտէ կըրկին իր մասին խօսել է տալիս: Նա նախ հաշտվել է իր կնոջ հետ և ապա, թողնելով Անգլիան, եկել է այժմ Բելգիա: Բուլանտէ հաւատացած էր, որ Գերմանիայի և Ֆրանսիայի վերջին օրերի լարված յարաբերութիւնները անկարգութիւնները առաջ կը բերեն Պարիզում և դա միջոց կը տայ իրան վերադառնալ: Ֆրանսիան Սակայն նա այժմ հիասթափվեց իր ունեցած յոյսերից:

—Ռուս կազակ Ալիօնով ծաղրածութեան առարկայ է դարձել Պարիզում: Ժողովուրդը ծաղրական երգեր է յորինել նրա առիթով և երգում է փողոցում այդ երգերը: Միայն տիկին Ադան, «Nouvelle Revue» ամսագրի խմբագիրը, իր տանն ընդունելով Ալիօնովին՝ զիտաւորութիւն ունէր մեծ նշանակութիւն տալ նրա Պարիզ գալուց, ջանալով ներկայացնել նրան, որպէս ուսուցիչ-սիական բարեկամութեան մի տեսակ զօջակակիր: Սակայն տիկինը ջանքերը միմիայն ծաղրաւոր քերեցին, նոյն իսկ ուսուցիչ արտաքին գործերի մինիստրութեան օրդան, Բրիտէլի «Le Nord» լրագիրը կատակեցունք է անուանում Ալիօնովին և տիկին Ադանին:

—Հռոմից հաղորդում են, որ պրինց Նապոլէոն ծանր կերպով հիւանդացած:

—Բերլինի ուսուցիչ դեսպան Կոմս Դուվալով ժամանակաւորապէս թողնելով Բերլին, ուղևորվեց Պետերբուրգ, որտեղ, ինչպէս լսվում է, մի ամիս չափ պիտի մնայ:

—Ասում են որ Բերլինի ֆրանսիական դեսպան Լըբլա, շատ զգուշ լինելով Պարիզում պատահած վերջին անցքերից, ինքն զինել է ֆրանսիական կառավարութեանը, ինքնուրույն որ իրան յետ կանչեն Բերլինից և ուրիշ որ և է պաշտօն տան: Նա շատով գալու է Պարիզ, իսկ նրա տեղը նշանակվելու է կամ Կուրէյն, կամ Ժիլի Սիմոն:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Թուրք խաղաղութիւնի համար հետաքրքիր մի նորութիւն:

Գերմանացի կարլ Բուխմիլլէր արտոնութիւն է ստացել գերմանական կառավարութիւնից խաղաղութիւնը պատրաստելու ոչ թէ թղթից, ինչպէս առաջ էին պատրաստում, այլ կառուցելով: Այդ խաղաղութիւնը աւելի տևողական է և աւելի է ժամանկուն: Նրանց վրա կարելի է նշաններ դնել և ապա հետադարձեալ ջնջել այդ նշանները սպիւքում: Կամ տեղափոխել ձէլով: Նկարները նրանց վրա կատարված կը լինեն ակուսարկով և շատ գեղարուեստական կերպով:

Շվեյցարիայի Գլարուս կանտոնում վախճանվել է նորբուրում մի ոմն զօրուոր 300 ֆի, որը մի տարրիկ կտակ է արել: Նա իր թողած 20.000 ֆրանկ գումարը, անշան համարելով, կտակել է ոչ թէ իր այժմեան ժառանգներին, այլ դուստրը բանիկը գնելով պատուիրել է, որ 100 տարուց յետոյ, երբ 20 հազար ֆրանկ կհաճէ մինչև 3 միլիոն ֆրանկ, այդ գումարը հաւասարապէս բաժանվի այն իր ժառանգներին մէջ, որոնք 100 տարուց յետոյ գոյութիւն կունենան:

Վարակիչ հիւանդութիւնների բացիներ շատ անգամ նստում են և թուլանում: Գերմանացիները մէջ և այդպիսով թուլանի հետ փոխադրվում են մինչև անգամ ահագին տարածութիւններով: Նորբուրում, Մարսելում, երիտասարդ ամուսիններ առել էին Հնդկաստանից նոր եկած նաւատիրերից մի թուլակ: Այդ թուլակը տուն բերեցին, բայց մի քանի ժամանակից յետոյ թէ իրանք ամուսինները և թէ նրանց ծնողները հիւանդացան դեղին տենդ առնելով վարակիչ հիւանդութեամբ: Կարճ ժամանակից յետոյ ընտանիքի անդամներից մի քանիս վախճանվեցան... Երկր թուլակը իր փետուրների մէջ Հնդկաստանից բերել էր դեղին տենդի վարակիչ բացիները:

Մի ամերիկական լրագիր տպագրել է իր բոլոր այն բաժանարարների անուանացուցակը, որոնք նոր տարւանից չեն նորոգել իրանց բաժանորդագրութիւնը, աւելացնելով այդ անձանց հասցէին հետեւեալ գեղեցիկ բարեմաղթութիւնները: «Թող ձեզ երբեք չը համբուրէ ոչ մի գեղեցիկ կին, թող էգ և արու կատուններ խմբեր գիշեր ցերեկ անհանգստացնեն ձեզ իրանց սիրոյ մեղեդիներ երգելով, թող ձեր ամբողջ կեանքում ոչ մի գործ ձեզ երբեք չաջողվի, և վերջապէս թող սատանաները ձեզ տանն դժօրքի անուանուրը»:

Երկու բարեկամներ թատրոնում նստած՝ հիւսում են լսում բազմա մի գեղեցիկ կնոջ վրա: —Ախ, նա հրաշալի կին է, որքան գեղեցիկ, որքան սիրելի, որքան խելացի, որքան դուարթ և ուրախ բնավորութեան, ասում է մէկը: —Եւ ինչ որ գրաւիչ է, մասնաւորապէս զգեցկուցիւթեան մէջ, այդ այն է, որ այդ գեղեցկութեան հետ կապված է միշտ անակնկալութեան հրապրոյը...

—Ինչպէս...

—Փորձիր նրան մի չարախ շարունակ քո տունը հրաւիրելու, — և երբեք առաջուց չես կարողանայ դուշակել թէ նրա հրաշալի մազերը ինչ գոյնի կը լինեն...

Նիւ-Իորքի համալսարանում մեծ աշտոյթեան ունեն օրերից էմիլիա Կէպլին կին-պրոֆեսորի դասախոսութիւնները: Նա կարդում է դասախոսութիւններ իրաւաբանական ֆակուլտետում և պաշտպանում է դրաւորապէս կանանց իրաւունքները: Օրերից շվեյցարուհի է և աւարտել է իր ուսումը Ցիւրիխի համալսարանում, իրաւաբանութեան դոկտորի աստիճանով:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Աթլէթ, 22 փետրվարի: Մեծ Իշխան Գեորգի Ալեքսանդրովիչ երէկ ուղևորվեց Ալմիր:

Բերլին, 22 փետրվարի: Իշխան Բիսմարկ համարվում է կանգնող ազգային-ազատամարտների՝ Բելգիայի անդամի պաշտօնի համար՝ Հանսովերեան նահանգի մի շրջանի կողմից:

Գրիսիտի, 22 փետրվարի: Կաղմակերպված է ազատամարտ միջնորդութիւն արմատական Ստէշ-նի նախագահութեամբ:

Բուխարեստ, 22 փետրվարի: Կաղմակերպված է նոր պահպանողական միջնորդութիւն՝ Ֆրոնտալու գնեւրալի նախագահութեամբ:

ԼՕՆԻՐՆ, 22 փետրվարի: Անգլիական բանլը, 71.000 ֆունտ ստերլինգ բաց թողնելով՝ «Վալիան» առևտրական տան գործակալարի կեղծ մուրհակներով, այդ առևտրական տանից է պահանջում իր վնասները: Վալիան հրաժարվում է վող վճարել, բայց օրերից ժողովը, իբրև բարձրագոյն դատաստանական ատեն, վճռեց, որ նա վճարի այդ փողը, այն հիման վրա, որ վալիան չէ ստուգել մուրհակները:

ՊԲԱԳԱ, 22 փետրվարի: Աւստրիական ընկաւրատի ընտրութիւններում նոր չեխերը վերջնականապէս յաղթեցին հին-չեխերին, այնպէս որ վերջինները բոլորովին հեռանում են գործից:

Բուխարեստ, 22 փետրվարի: Պատգամաւորների ժողովն անվտանգութիւն արտայայտեց նոր միջնորդութեան: Ասում են, որ թագաւորը կարձակէ պատգամաւորները ժողովը և կը նշանակէ նոր ընտրութիւն:

ԼՕՆԻՐՆ, 22 փետրվարի: Պաշտօնապէս հաստատված է, որ Կրետէ կղզու վրա ապստամբութիւնները շարունակվում են և որ յանցաւորները յաճախ թիւրքաց ժանդարմներն են:

ԹԱՌԱՌՄ, 22 փետրվարի: Երկաթուղու մօտիկ կայարաններից միում սպանված է սահմանապահ մի զինուոր, նրանից բերդանկա հրացանը խլելու նպատակով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 փետրվարի: Ներքին գործերի մինիստրութեան պաշտօնայ ստատիկի սովետիկ Ալֆրէակի նշանակված է մինիստրի դիւանատան կառավարիչ: Հրատարակված է «Ռուսաց նաւադնացական և առևտրական ընկերութեան» նոր

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

му